ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԻԿՏՈՐ ԿԱԶԱՆՑԵՎԻՆ

Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Հարավային Դաշնային մարզում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վիկտոր Կազանցևին և իր գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ՌԴ Հարավային Դաշնային մարզի իշխանությունների ներկայացուցիչներին այն հոգածության համար, որ տածում են հայ համայնքի նկատմամբ: Բարձր գնահատելով բազմազգ այդ տարածաշրջանում խաղաղություն ապահովելու նրանց ջանքերը՝ Վեհափառ Հայրապետը մաղթեց Վիկտոր Կազանցևին Աստծո օգնականությունը՝ի զորացումն երկու ժողովուրդների դարավոր բարեկամության:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ տիար Կազանցևը արտահայտեց իր ջերմ վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և փաստեց երկու ժողովուրդների բարեկամական սերտ կապերի մասին: «Մեր առաքելությունն է՝ վերականգնել այն բոլոր կապերը, որ եղել են մեր երկու ժողովուրդների միջև բոլոր ոլորտներում և առավել զորացնել դրանք», - ասաց ՌԴ Հարավային Դաշնային մարզում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչը՝ նշելով նաև, որ ամեն կերպ աջակցում է տարածաշրջանում կազմակերպվող միջեկեղեցական և միջկրոնական երկխոսություններին:

Հանդիպմանը ներկա էր Հարավային Ռուսասատանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ